Հոդված 19. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 1000-ապատիկի չափով

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1	դեղերի արտադրության համար՝ տարեկան	բազային տուրքի 200-ապատիկի չափով
2.2	***(ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)***	
2.3	***(ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)***	
2.4	դեղատնային գործունեության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
2.5	կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
2.6	գենետիկ ինժեներիայի գործունեության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
2.7	***(ենթակետն ուժը կորցրել է 19.06.13 ՀՕ-85-Ն)***	
2.7[1].	***(ենթակետն ուժը կորցրել է 19.06.13 ՀՕ-85-Ն)***	
2.8	շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ստանալու համար՝	
	ա) ավագ բուժաշխատողի համար՝	բազային տուրքի եռապատիկի չափով
	բ) միջին բուժաշխատողի համար՝	բազային տուրքի չափով

2.9.	դեղերի մեծածախ իրացում	տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով